**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1

## ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքի ավագանու թիվ 1 նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ.

*1. Համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 15-ի թիվ 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:*

*2. Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին:*

*3. Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը բյուջեի 2016թ չորրորդ եռամսյակի կատարողականի մասին:*

*4. Համայնքի ավագանու 2012թ.նոյեմբերի 27-ի թիվ 16 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմի հաստատման մասին:*

*5. Համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 22-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:*

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (կողմ)
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-ին կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 15-ի <<Համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու ու համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (կողմ)
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2017թվականի հունվարի 20-ի թիվ 2-Ն որոշման

# *ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

*Տեղական տուրքերի դրույքաչափերը*

1.Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 դրամ.
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ.
-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3 000 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3 000 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ հինգ հազար դրամ.

4)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11 000 դրամ ,

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11 000 դրամ
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000 դրամ.

5) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

6) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6 000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11 000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համա 16 000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3 000դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000 դրամ.

7) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 500 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

8) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100 000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 դրամ.

**2.** *Բերդիկ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը* ՝

1) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , շինարարության ավարտը փաստագրելու համար փոխհատուցման վճար ՝ 1 000 դրամ ,

2) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1 000 դրամ ,
3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար ՝ մասնակիցներից վճար ՝ 1 000 դրամ :
4) աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար ՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ՝ ամսական 0 դրամ :

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՝ ԺԱՐՈՒԺԻ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի և 69-րդ հոդվածի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ղեկավարի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2016թ-ի չորրորդ եռամսյակի կատարողականի մասին գնահատել դրական և ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2017թ-ի հունվարի 20-ի թիվ 4 որոշման

# ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

2017 թ-ի հունվարի 10-ին Բերդիկ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում,որը նախագահում էր համայնքի ղեկավար Ի.Թարվերդյանը , քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Զ. Ղազարյանը :Մասնակցում էին ավագանու անդամները , համայնքի ղեկավարի աշխատակազմը , դպրոցի տնօրենն ու մանկավարժները , համայնքի բնակիչները :

ԼՍԵՑԻՆ՝ Արարատի մարզի Բերդիկ համայնքի ղեկավար Ի. Թարվերդյանի եռամսյա հաղորդումը համայնքի բյուջեի 2016 թվականի չորրորդ եռամսյակի կատարողականի վերաբերյալ:

<u>Արձանագրվեց,որ</u>

2016թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Բերդիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 35 դիմում , ինչպես նաև բանավոր հարցումներ , որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:
- Համայնքապետարանը բնակիչներին տվել է 38 տեղեկանք, ստացել է 26 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից , որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:
- 2016թ-ի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

 ա) հողի հարկ - 1 362 .429 հազար դրամ ,
 բ) գույքահարկ – 1 366.783 հազար դրամ ,
 գ) տեղական տուրք – 12,000 հազար դրամ ( ,
 դ) ոչ հարկային եկամուտ – 80 ,000 հազար դրամ ,

Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ- տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, որոնցից են՝

- համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է ֆինանսական աջակցություն 670 000 /վեց հարյուր յոթանասուն հազար / դրամ ,
- հուղարկավորությունների համար հատկացվել է անհատույց դրամական աջակցություն ՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ :

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5

## ԱՎԱԳԱՆՈՒ 2012Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի , <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումը

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ավագանու 2012թ-ի նոյեմբերի 27-ի <<Համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմի հաստատման մասին>> թիվ 16 որոշումն ուժը կորցրած ճանաչել ու հաստատել համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (կողմ)
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (կողմ)
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2017թ-ի հունվարի 20-ի թիվ 5 որոշման

## *ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ*

***Հանձնաժողովի նախագահ՝ Սեդա Մինասյան*** – Բերդիկի միջնակարգ դպրոցի տնօրեն /հեռ.՝094811168/,

***Հանձնաժողովի քարտուղար՝ Զարուհի Ղազարյան*** - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /հեռ.՝093603401/,

***Հանձնաժողովի անդամներ՝***

***Հովհաննես Վարդանյան*** - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /հեռ.՝098309808/,

***Քաղցրիկ Մաթևոսյան*** - Բերդիկի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն /հեռ.՝093965501/,

***Վարդան Գալստյան*** - ավագանու անդամ /հեռ.՝ 077737534/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԶԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, 091-70-87-74, berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի <<Համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին>> թիվ 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ կամ լրացումներ, և այն շարադրել նոր խմբագրությամբ ՝ համաձայն հավելվածի :

Կողմ - 5　　　Դեմ - 0　　Ձեռնպահ - 0

1. ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　　ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 20-ի թիվ 6-Ն որոշման

# ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

**Եկամուտների գծով – 21 250.2 հազ. դրամ ,**
**Ծախսերի գծով – 21 250.2 հազ. դրամ ,**
**Դոտացիա – 15 659.7 հազ. դրամ ,**
**Գանձապահական հաշվի մնացորդ առ 01.01.2017թ. – 3 693.373 հազ. դրամ :**

| | |
|---|---|
| Վարչական բյուջեի եկամուտները ընդամենը ՝ | 21 250.2 հազ. դրամ , |
| *1 . Հարկային եկամուտներ ՝* | *4818.0 հազ. դրամ ,* |
| այդ թվում ՝ | |
| ա. հողի հարկ՝ | 2600.0 հազ. դրամ , |
| այդ թվում ՝ | |
| ֆիզիկական անձանցից ՝ | 2600.0 հազ. դրամ , |
| բ. գույքահարկ շենք շինություններից ՝ | 70.0 հազ. դրամ , |
| այդ թվում ՝ | |
| ֆիզիկական անձանցից ՝ | 70.0 հազ. դրամ, |
| գ. գույքահարկ փոխադրամիջոցներից ՝ | 2100.0 հազ. դրամ, |
| դ . տեղական տուրքեր ՝ | 48.0 հազ. դրամ , |
| այդ թվում ՝ | |
| ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն ՝ | 24.0 հազ. դրամ , |
| ծխախոտի վաճառքի թույլտվություն ՝ | 24.0 հազ. դրամ , |
| *2. Ոչ հարկային եկամուտներ ՝* | *772.5 հազ. դրամ ,* |
| այդ թվում ՝ | |
| վարձակալական հողերի վարձավճար ՝ | 772.5 հազ. դրամ , |
| *3. Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ ՝* | *15659.7 հազ. դրամ ,* |
| այդ թվում ՝ | |
| դոտացիա ՝ | 15659.7 հազ. դրամ , |

## *ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ*

4111 – 10034.4 հազ. դրամ – աշխատավարձ ,
4212 – 900.0 հազ. դրամ – էներգետիկ ծառայություններ,
որից ՝ 600.0 հազ. դրամ – վարչական շենքի և փողոցների լուսավորման համար էլեկտրաէներգիայի վարձավճար ,
300.0 հազ. դրամ –վարչական շենքի ջեռուցման համար դիզ.վառելիքի ձեռքբերում ,
4213 – 1000.0 հազ. դրամ – կոմունալ ծառայություններ ,
4214 – 120.0 հազ. դրամ – ինտերնետային կապի ծառայություն ,

4215 – 33.0 հազ. դրամ – ծառայողական մեքենայի ապահովագրական ծախսեր ,
4232 - 100.0 հազ. դրամ – համակարգչային ծառայություններ ,
4234 - 100.0 հազ. դրամ – թերթերի բաժանորդագրություն ,
4251 - 300.0 հազ. դրամ – փողոցների կոճախճապատում և պահպանում,
4261- 200.0 հազ. դրամ – գրասենյակային պիտույքների ձեռքբերում ,
4264 – 600.0 հազ. դրամ –տրանսպորտային նյութեր ,
որից՝ 400.0 հազ. դրամ - ծառ. մեքենայի վառելիքի /գազ/ ձեռքբերում ,
200.0 հազ. դրամ – ավտոպահեստամասերի, յուղի,անտիֆրիզի ձեռքբերում,
4269 – 350.0 հազ. դրամ – այլ նպատակային նյութեր՝միջոցառումների համար ,
4637 - 400.0 հազ. դրամ - ֆինանսական աջակցություն դպրոցին ,
4726 - 350.0 հազ. դրամ – հուղարկավորությունների ծախսեր ,
4729 – 2400.0 հազ. դրամ – այլ նպաստներ բյուջեից ,
որից ՝ 200.0 հազ. դրամ – հիվանդներին ,
50.0 հազ. դրամ – ազատամարտիկներին ,
1800.0 հազ. դրամ – անապահով ընտանիքներին ,
350.0 հազ. դրամ – նորածին երեխաներին,
4819 – 160.0 հազ. դրամ – նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպությ,
որից ՝ 100.0 հազ. դրամ – Արարատ հիմնադրամին ,
60.0 հազ. դրամ – Օլիմպիկ հիմնադրամին ,
4823 – 11.0 հազ. դրամ – ծառայողական մեքենայի տեխզննություն ,
4891 – 4 191.8 հազ. դրամ - պահուստային ֆոնդ ,
*5113 – 2 800.0 հազ. դրամ – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում,*
*որից ՝ 1 500.0 հազ. դրամ – վարչական շենքի կապիտալ վերանորոգում ,*
*1 300.0 հազ. դրամ – արտաքին լուսավորության ցանցի հիմնում ,*
*5122 – 500.0 հազ. դրամ – վարչական սարքավորումների գումար ,*
*5134 – 120 000 – նախագծահետախուզական ծախսեր,*
*որից ՝ 60.0 հազ. դրամ – վարչական շենքի կապիտալ վերանորոգում ,*
*60.0 հազ. դրամ – արտաքին լուսավորության ցանցի հիմնում:*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՔԱՐՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ